ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2023թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) N2 հավելվածում «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն				
1	Վարչության պետ	1	697,000		697,000
2	Վարչության պետի տեղակալ	1	561,000		561,000
3	Գլխավոր մասնագետ	2	323,000		646,000
4	Առաջատար մասնագետ	3	289,000		867,000
5	Առաջին կարգի մասնագետ	5	282,200		1,411,000
6	Արտաքին ձևավորման դիզայներ	1	374,000		374,000
7	Համակարգչային տեխնիկայի օպերատոր	1	357,000		357,000
8	Համակարգչային տեխնիկայի օպերատոր	1	272,000		272,000
	Ընդամենը՝	**15**			**5,185,000**

2) «Ι.Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան» տողում «664.5» և «226,143,780» թվերը փոխարինել համապատասխանաբար՝ «666.5» և «226,742,180» թվերով:

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «1964.5» և «610,724,580» թվերը փոխարինել համապատասխանաբար՝ «1966.5» և «611,322,980» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արտաքին ձևավորման և գովազդի վարչության նպատակը արտաքին ձևավորման և գովազդի բնագավառում Երևանի քաղաքապետին վերապահված լիազորությունների իրականացման ապահովումն է որոնք իրականացվում են համայնքային բյուջեի ծրագրերով:

Վարչությունը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերի համապատասխան ապահովում է վարչական վարույթի իրականացումը, քաղաքային և հանրապետական նշանակության միջոցառումների ժամանակ մրցույթային կարգով կազմակերպում և իրականացնում Երևան քաղաքի արտաքին ձևավորման և դրոշակազարդման աշխատանքներ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում արտաքին ձևավորման և գովազդի ոլորտում վարչական շրջանների ղեկավարներին սահմանված կարգով պատվիրակված լիազորությունների կատարման նկատմամբ, որոշում է Երևան քաղաքի տարածքում արտաքին ձևավորման և գովազդային վահանակների տեղադրման /տեղաբաշխման/, առկա գովազդային վահանակների իրավական կարգավիճակը ճշտելու, տեղափոխման, ապամոնտաժման, վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման ժամկետների երկարացման, վերականգման, վերակառուցման և արդիականացման նպատակահարմարությունը և քաղաքապետի հաստատմանն է ներկայացնում համալիր լուծումների տարբերակներ՝ որոշումների կամ կարգադրությունների տեսքով: Արտաքին ձևավորման և գովազդի ոլորտում իրականացնում է հսկողություն «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և իրավական այլ ակտերի պահանջների կատարման նկատմամբ, իրեն տրված լիազորությունների սահմաններում իրականացնում է վարչական իրավախախտումների փաստերի արձանագրումը և վարչական իրավախախտումների վերաբերյալ կազմված նյութերը ներկայացնում է Երևանի քաղաքապետին, ուսումնասիրում և պարզում է վարչական շրջանների և գովազդային կազմակերպությունների կողմից ներկայացված գովազդային ուրվանկարների և համապատասխան փորձաքննություն անցած մոնտաժային նախագծերի համապատասխանությունը իրավական նորմերին և տալիս է համաձայնություն կամ մերժում դրա տրամադրումը, ըստ անհրաժեշտության վարչությունը սահմանված կարգով նախաձեռնում է նաև Երևանի քաղաքապետի կողմից համապատասխան հողհատկացման գործընթացը, ինչպես նաև համաձայնություն է տալիս հենասյուների կամ այլ գույքի վրա գովազդի միջոցի տեղադրման համար:

Երևան քաղաքի ավագանու 29.10.2018 թվականի թիվ 10-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է հանդիսանում Արտաքին ձևավորման և գովազդի վարչությունը:

Վարչությունում հաստիքների ընդհանուր թիվը 13 է՝ վարչության պետ, պետի տեղակալ-գլխավոր նկարիչ 1 /մեկ/, գլխավոր մասնագետ՝ 1 /մեկ/, առաջատար մասնագետ՝ 4/չորս/, առաջին կարգի մասնագետ՝ 3/երեք/, արտաքին ձևավորման դիզայներ 1 /մեկ/ համակարգչային տեխնիկայի օպերատոր 2/երկու/:

Արտաքին գովազդի վերահսկաման էլեկտրոնային համակարգի արդիականացման և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 37-Ն որոշման փոփոխություններով պայմանավորված նախատեսվող աշխատանքների ծավալի մեծացման և այն պատշաճ կազմակերպման համար առաջարկվում է վարչությունը համալրել ևս 2 առաջին կարգի մասնագետների հաստիքներով և առաջատար մասնագետի մեկ հաստիքը փոխարինել գլխավոր մասնագետի հաստիքով, ինչպես նաև վարչության պետի տեղակալ-գլխավոր նկարիչ հաստիքի անվանումը փոխարինել վարչության պետի տեղակալ անվանումով, քանի որ գլխավոր նկարչի գործառույթները իրականացվում է արտաքին ձևավորման դիզայներ հաստիքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**